

ԿՅՆՆՔԸ ԻՆԴՈՆԵԶԻՍՏԻ ՀԱՅ ԿԱՂՈՒԹՈՒՄ

Կիրակի, դեկտեմբերի 14-ին, տեղվույս պատվարժան վարչության նախաձեռնությամբ, տեղի ունեցավ Ս. Գեորգ եկեղեցու հիմնադրության 25-ամյակի առթիվ հանդիսավոր տոնակատարություն:

Տեղական մամուլի միջոցով հրավիրված էին տեղիս կրոնական հաստատությունների պաշտոնյաները և մի շարք երեկոյի անձնավորություններ:

Հակառակ շաբաթներից ի վեր հորիզոնի վրա կուտակված մառախլապատ ամպերի ու անընդհատ տեղացող անձրևին, այդ օրը մուրաբայայի գեղածիծաղ առավոտներից մեկն էր. երկնակամարի վրայից բոլորովին չքացել ու անհետացել էին գորշ ամպերը, արևինքը ջինջ ու կապույտ էր, արեգակը փայլում էր սովորականից ավելի պայծառ ու գեղեցիկ: Թե՛ եկեղեցու բակում և թե՛ դիմացի փողոցներում նշմարվում էր արտակարգ եռուզեռ: Հայ համայնքն ու հրավիրյալները անուշաբույր ծաղկեփնջեր ձեռներին, փութացել էին ժամանակից առաջ տեղ գրավելու Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու մեջ:

Նշանակված ժամին եկեղեցու զանգակների անուշ ղողանջումով և «Նորհուրդ խորին» քաղցր մեղեդիով սկսվեց սուրբ պատարագը: Թե՛ քահանան և թե՛ երգեցիկ խումբը գեղեցիկ ներդաշնակությամբ կատարեցին սուրբ պատարագի զմայլեցուցիչ արարողությունը: «Կատարումն օրինաց»ից հետո տեղի ունեցավ գոհաբանական մաղթանք՝ վասն հաստատության և անսասանության Մայր Աթոռ Սրբոց Էջմիածնի և արժանավոր Գահակալ Նորին Վեհափառ Հայրապետի Ամենայն Հայոց Ս. Ս. Գեորգ Զ. Սրբազնազույն Կաթողիկոսի արևշատության ու անգործության:

Թյան: Երգեցիկ խումբը բարձր տրամադրությամբ երգեց «Հրաշափառ» և «Էջ Միածինն» շարականները, որից հետո Խնդոնեղիայի հայոց հոգևոր հովիվ արժանապատիվ տեր Արիստակես քահանա Միրզայանը օրվա նշանակության մասին խոսեց շատ իմաստալից ու հոգեշունչ մի քարոզ, բնաբան ու նենալով «Եկայք, շինեցուք սուրբ ղխորանն լուսոյ, քանզի ի ամա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»: Նա վերջում կոչ արեց հայ համայնքին՝ ավելի սերտորեն կապվել Հայ Եկեղեցուն և հավատարիմ մնալ նրա սրբազան խորհուրդներին, սրբություններին ու ավանդություններին, սիրել հայ մշակույթը, հայ լեզուն, հայ գիրն ու գրականությունը, որոնց շնորհիվ կարելի էլինի պահպանել ազգային ինքնությունը և ազգային մեջ:

Ուրարակիր պ. Եղրաս Տեր-Գրիգորյանը պարզեց հյուրերին Հայ Եկեղեցու ծագումն ու զարգացումը և ազգային ու քաղաքական մարգերում նրա կատարած դերը: Նույն միջոցին ստացվեցին ուկարդացվեցին Զակարյայի Կենտրոնական հարգելի վարչության, Նոր-Ջուղայի պատկառելի Կրոնական խորհրդի և արժանապատիվ տեր Վարդան ավագ քահանա Ս. Վարդանյանի շնորհավորական հեռագրերը: Կրոնական խորհուրդը միևնույն ժամանակ ուրարակության արտոնություն շնորհած էր պ. Խաչատուր Խ. Դավթյանին իր աղգանվեր ծառայության համար:

Քահանայի «Պահպանիչ» աղոթքով եկեղեցին վերջացավ և ժողովուրդը թողեց եկեղեցին հոգեկան բարձր տրամադրության մեջ:

(Կալկաթա, «ՆՈՐ ԱՋԴԱՐԱՐ»)

«ՖՐԻԿԻԴԻՎԱՆԸ»

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հրատարակությամբ լույս է տեսել 13-րդ դարի նշանավոր հայ տաղերգու Ֆրիկի տաղերի ժողովածուն՝ «Ֆրիկի դիվան» խորագրով: Ժողովածուն կազմել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ծերունի միաբան դերաշնորհ Տիրան արքեպիսկոպոսը, նրա վրա աշխատելով ավելի քան երկու տասնամյակ: Ժողովածուն 755 մեծադիր էջերից բաղկացած հատոր է: Նրա մեջ մտնում են Ֆրի-

կի 51 տաղերը՝ իրենց տարբերակներով: Հատորում գետնադրված է հրատարակչի արժեքավոր ուսումնասիրությունը՝ Ֆրիկի անձնավորության, երկրի, նրա ապրած ժամանակաշրջանի, միջավայրի պայմանների, հետադայի տաղերգուների վրա թողած ազդեցության մասին և այլն: Ժողովածուի վերջում տրված է Ֆրիկի բառարանը՝ իր լուսաբանություններով: